

Հասմիկ Հովհաննեսի Բարեղամյանի

«Ձվարանային պահուստը որպես դեռահաս տարիքի աղջիկների
վերարտադրողական ներուժի գնահատման նոր գործիք» թեմայով
ԺԴ. 00.01 – «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությամբ բժշկական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության
պաշտոնական ընդդիմախոս Բ.Գ.Թ. Ռ.Ս.Վարդանյանի կարծիքը

Ատենախոսի աշխատանքը նվիրված է վերարտադրողական տարիքում
պտղաբերության ցածր պահուստի ռիսկի խմբին պատկանող դեռահասների
հայտնաբերմանը, նրանց կյանքի որակի լավացմանը, հոգեբանական աջակցության
տրամադրմանը և հետագա վերարտադրողական ֆունկցիայի իրականացման համար
անհատական վարման պլանի մշակմանը՝ վերարտադրողական տարիքում
մանկածնման ֆունկցիայի խանգարումները, մանկաբարձագինեկոլոգիական
մարտահրավերները կանխելու նպատակով:

Վերջին տարիներին ամբողջ աշխարհի հետազոտողների ուշադրությունը
սեռվում է դեռահաս տարիքի աղջիկների վերարտադրողական առողջության
պահպանմանը: Հստակ է, որ կնոջ վերարտադրողական ներուժը մեծապես որոշվում
է մանկության և սեռահասունացման շրջանում դեռահասի առողջական վիճակով:
Հետազոտական աշխատանքն ուղղված է ձվարանային պահուստի ցուցանիշների և
դրանց վրա ազդեցություն ունեցող գործոնների գնահատմանն ավելի վաղ՝ դեռահաս
տարիքից սկսած՝ սկսելով ռիսկի խմբի դեռահասների և նրանց ծնողների
ուշադրությունը հետագա վերարտադրողական առողջության պահպանման
կարևորության վրա: Ի տարբերություն կանանց՝ վերարտադրողական տարիքում
ձվարանային ցածր պահուստի առումով ռիսկի խմբին պատկանող դեռահասների
հորմոնալ ֆունկցիան քիչ է ուսումնասիրված, նրանք և նրանց ծնողները կամ
խնամակալը հիմնականում իրազեկված չեն պտղաբերության պահպանման
կարևորության և գործող ռազմավարությունների մասին:

Վերջինս թույլ կտա վերարտադրողական տարիքում նվազագույնի հասցնել մանկածնման ֆունկցիայի խանգարումները, անպտղության ցուցանիշները, իսկ «կենսաբանական ժամացույցի» գնահատման արդյունքում՝ մշակել անհատական վարման պլան: Վերջին տարիներին դեռահաս տարիքի աղջիկների վերարտադրողական առողջության պահպանությունը դարձել է բժշկասոցիալական առաջնահերթ հիմնախնդիր ողջ աշխարհում՝ պայմանավորված բնակչության վերարտադրողական ֆունկցիայի անկման հետ՝ ավելի ու ավելի սկսելով հետազոտողների ուշադրությունը վերարտադրողական ֆունկցիայի պահպանման նպատակով օժանդակ տեխնոլոգիաների կատարելագործմանը: Ատենախոսական աշխատանքի համար ընտրված հորմոնալ, փոքր կոնքի և վահանաձև գեղձի գերձայնային հետազոտությունների իրականացումը լիովին բավարարում է հետազոտական աշխատանքի նպատակին: Ուսումնասիրված են նաև սեռական և արտասեռական հիվանդությունները: Ընդգծվում է նաև բժշկական աշխարհագրության և առողջության միջև կապը՝ կարևորելով շրջակա միջավայրի գործոնների ազդեցությունը դեռահասի առողջության վրա:

Գիտական աշխատանքի եզրակացությունը և առաջարկությունները

Ուսումնասիրության օբյեկտ են հանդիսացել Երևան քաղաքի և ՀՀ մարզերի 13-18 տարեկան 417 դեռահաս աղջիկներ: Հետազոտության բազա են հանդիսացել «Բեզլարյան» ԲԿ-ն, «Ուիզմոր» Քլինիքը: Հետազոտությունն իրականացվել է դեռահասի, նրա ծնողի կամ խնամակալի կողմից տեղեկացված համաձայնության հիման վրա: Հետազոտության կազմակերպման ծրագիրը քննարկվել և երաշխավորվել է Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի էթիկայի կոմիտեի կողմից: Դեռահասների հետազոտության մեջ ներառման համար եղել են համապատասխանության չափանիշներ: Հետազոտությունը կատարվել է դեպք-ստուգիչ դիզայնով: Դաշտանային ցիկլի խանգարումների հիմքում ընկած գինեկոլոգիական հաճախ հանդիպող հիվանդությունների առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հետազոտվող դեռահասները բաժանվել

են երկու խմբի՝ հիմնական (ձվարանի վրա վիրահատական միջամտություն կրած և ձվարանի ֆունկցիոնալ ու ոչ ֆունկցիոնալ 5-7սմ տրամագծով գոյացություն ունեցող դեռահասներ) և ստուգիչ:

Աշխատանքում տվյալների վերլուծության համար կիրառվել է IBM SPSS Statistics ծրագիրը: Վիճակագրական վերլուծության և գնահատման համար կիրառվել են AMOVA, Tukey post hoc, T-թեստը, միջին և հարաբերական ցուցանիշների հաշվարկները:

Կատարված աշխատանքի արդյունքում եզրակացվել է, որ ձվարանի գոյացության հյուսվածաբանական տեսակը ներգործություն ունի ձվարանային պահուստի վրա: Էնդոմետրիոմա և ցիստադենոմա (5-7սմ տրամագծով) ունեցող դեռահասները ռիսկի խումբ են վերարտադրողական տարիքում ձվարանային ցածր պահուստ ունենալու առումով: Էնդոմետրիոմա և ցիստադենոմա ունեցող դեռահասների մոտ հակամյուլլերյան հորմոնը և ձվարանի անտրալ ֆոլիկուլների քանակը վիճակագրորեն զգալի ցածր էին տերատոմա և ձվարանի ֆունկցիոնալ կիստա ունեցողների համեմատ: Ձվարանի վրա վիրահատական միջամտություն կրած դեռահասների ձվարանային պահուստը ուսումնասիրելիս՝ հեղինակը եկել է եզրակացության, որ ձվարանի վրա կատարվող վիրահատությունը բացասական ազդեցություն է թողնում ձվարանային հյուսվածքի և պահուստի վրա՝ առավելապես բաց որովայնահատման դեպքում: Արդյունքում առաջարկվել է, որ ձվարանի առողջ հյուսվածքի պահպանման նպատակով նախընտրությունը տալ որակավորված վիրաբույժի կողմից լապարոսկոպիկ մուտքով կատարվող վիրահատությանը: Հեղինակն առաջարկել է վիրահատությունը ձվարանի հյուսվածքի վրա կատարել խիստ ցուցումով, իսկ արդեն վիրահատական միջամտություն կրած դեռահասների ձվարանային պահուստի հսկողության համար մշակել է վարման ալգորիթմ:

Կլինիկական տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հեղինակի կողմից առաջ քաշած դրույթը՝ առողջության առաջնային պահպանման կենտրոններում, մանկական գինեկոլոգիայի բաժանմունքներում վերարտադրողական տարիքում

ձվարանային ցածր պահուստի ռիսկի խմբի դեռահասների հետազոտության համալիրում հակամյուլերյան, ֆուլիկուլիթանիչ հորմոնների և ձվարանների անտրալ ֆուլիկուլների քանակի դինամիկ գնահատումը: Դեռահասի արտասեռական և գինեկոլոգիական հիվանդությունների, սոցիալ-տնտեսական կարգավիճակի մանրամասն վերլուծության արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ վահանաձև գեղձի հորմոնալ և գործիքային հետազոտությունները դեռահասի կանոնավոր ֆիզիկական զննման կարևորագույն բաղադրիչն են:

Դեռահասների կյանքի որակի գնահատման արդյունքում եզրակացվել է, որ ձվարանի վրա վիրահատական միջամտություն կրած և ձվարանի գոյացություն ունեցող դեռահասների մոտ տուժում է կյանքի որակի ինչպես մտավոր, այնպես էլ ֆիզիկական բաղադրիչը: Դեռահասի կյանքի որակի վրա ներգործություն ունեն նաև արտասեռական և գինեկոլոգիական հիվանդությունները, դեռահասի սոցիալ-տնտեսական գործոնները՝ առաջացնելով արատավոր օղակ: Հետևաբար, կյանքի որակի գնահատման մոտեցումների ներդրումը բժշկական պրակտիկայում հնարավորություն կտա գնահատել և բարելավել դեռահասի առողջությունը, հիվանդության ընթացքը, բուժման արդյունավետ հսկողությունը:

Հեղինակի կողմից առաջարկվում է նաև մանկական գինեկոլոգիայի բաժանմունքներում ներդնել խորհրդատվական սենյակի գաղափար՝ վերարտադրողական տարիքում ձվարանային ցածր պահուստի ռիսկի խմբում գտնվող դեռահասի, նրա ծնողի կամ խնամակալի հետ հետագա վերարտադրողական պլանները քննարկելու, վարման պլանը մշակելու համար: «Կենսաբանական ժամացույցի» ճիշտ գնահատումը թույլ կտա վերարտադրողական տարիքում չհետաձգել և ժամանակին իրականացնել մանկածնման ֆունկցիան:

Արդիականության գնահատումը և աշխատանքի հավաստիությունը

Ատենախոսի կողմից կատարված հետազոտական աշխատանքի թեմայի ընտրությունը, դրված նպատակը և խնդիրները, ստացված եզրակացությունները չափազանց կարևոր են մանկաբարձագինեկոլոգիական պրակտիկայում:

Աշխատանքի գիտական նորույթն ու գործնական նշանակությունն անկասկած արդիական և հեռանկարային են մանկաբարձագինեկոլոգիական պրակտիկայում, քանի որ ռիսկի խմբի դեռահասների ձվարանային պահուստի՝ որպես կնոջ մանկածնման ֆունկցիան ապահովող գործոնի գնահատումը թույլ կտա նվազագույնի հասցնել վերարտադրողական առողջության հետ կապված խնդիրները, ձվարանային ցածր պահուստով պայմանավորված անպտղության ցուցանիշները:

Ատենախոսական աշխատանքը կազմված է ավանդական և ընդունված կարգով: Սեդմագիրը շարադրված է 22 էջի վրա, պարունակում է 3 աղյուսակ, 6 գծապատկեր և 1 նկար: Աշխատանքը կատարված է բարձր մակարդակով, օգտագործված մեթոդներն ամբողջությամբ համապատասխանում են ատենախոսի կողմից ներկայացված հետազոտական նյութի բնույթին:

Սկզբունքային դիտողություններ չկան, սակայն կուզենայի նշել մի քանի նկատառում աշխատանքի վերաբերյալ և քննարկել որոշ հարցեր ատենախոսի հետ:

1. Կցանկանայի մանրամասնեք ձվարանների վիրահատական բուժման ծավալները ձվարանի պատրված կիստայի կամ ապոպլեքսիայի դեպքում: Կան արդյո՞ք համեմատական տվյալներ ձվարանների պաշարի նվազման վերաբերյալ տարբեր վիրահատական միջամտությունների դեպքում:
2. Հաշվի առնելով հորմոնալ լայնածավալ հետազոտությունները՝ արդյո՞ք ընթացքում ի հայտ չեն եկել դեռահասներ պոլիկիստոզ ձվարանների համախտանիշ ունեցող ձվարաններ:

Հարցեր՝

1. Ինչպես եք բացատրում ֆոլիկուլիթանիչ հորմոնի վիճակագրորեն հավաստի տարբերությունը կրած վիրահատությունից 3 և 6 ամիս անց:
2. Ո՞ր դեպքում է դիտվել ձվարանային պաշարի առավելագույն նվազում՝ ցիստադենոմանների թե՛ էնդոմետրիոմանների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Հովհաննեսի Բարեղամյանի ատենախոսությունը «Ձվարանային պահուստը որպես դեռահաս տարիքի աղջիկների վերարտադրողական ներուժի գնահատման նոր գործիք» թեմայով հանդիսանում է ավարտուն հետազոտություն, որն ունի գիտական և գործնական մեծ նշանակություն:

Ըստ թեմայի արդիականության, գիտական նորույթի և արդյունքների այն կարող է որակավորվել որպես արժեքավոր ներդրում մանկաբարձագինեկոլոգիական պրակտիկայում: Հեղինակի կողմից ստացված արդյունքները հավաստի են, եզրակացություններն ու հետևությունները հիմնավորված:

Հաշվի առնելով վերը նշվածը համարում են, որ աշխատանքը համապատասխանում է թեկնածուական ատենախոսության պահանջներին և կարող է ներկայացվել հրապարակային պաշտպանության ԺԴ.00.01 – «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Պաշտոնական ընդդիմախոս

«Շենգավիթ» բժշկական կենտրոնի գլխավոր բժշկի տեղակալ,

Երևան քաղաքի գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգ

Բժշկական գիտությունների թեկնածու

Ռ.Ս. Վարդանյան

«Շենգավիթ» բժշկական կենտրոնի գլխավոր բժշկի տեղակալ Բ.գ.թ. Ռ.Ս. Վարդանյանի ստորագրությունը հաստատում են

«Շենգավիթ» բժշկական կենտրոնի կադրերի բաժնի ղեկավար

Տ.Մկրտչյան

30 ապրիլի 2025 թ.

